ԻՐԻՍ բիզնես ինկուբատոր

Հայտադիմումների ընդունման 2-րդ փուլի հրավեր, 2020 թ.

<u>Ընդհանուր տեղեկատվություն</u>

ԵՄ աջակցությամբ ստեղծված ԻՐԻՍ բիզնես ինկուբատորը սիրիահայ և տեղացի ձեռնարկատերերին առաջարկում է բիզնեսի զարգացման ծառայությունների ամբողջական շղթա՝ ներառյալ դասընթացներ, քոուչինգ, մենթորինգ, ինչպես նաև ֆինանսավորում՝ դրամաշնորհների և փոխառությունների միջոցով:

ԻՐԻՍ բիզնես ինկուբատորն ստեղծվել է 2019-ին «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության և «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից՝ «Սիրիահայերի և տեղացիների դիմակայունության բարձրացում» ծրագրի (ԻՐԻՍ ծրագիր) շրջանակում: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության՝ Սիրիայի ճգնաժամի արձագանքման տարածաշրջանային ֆոնդի (ՄԱԴԱԴ ֆոնդ) Ավստրիական զարգացման գործակալության եւ Ավստրիական Կարմիր խաչի կողմից:

ԻՐԻՍ բիզնես ինկուբատորի առաքելությունն է նպաստել սիրիահայերի և տեղացիների տնտեսական ինտեգրմանը և բարձրացնել Հայաստանի տնտեսության մրցունակությունը՝ խթանելով նորարարությունն ու ձեռնարկատիրությունը:

ԻՐԻՍ բիզնես ինկուբատորի տեսլականն է դառնալ ազգային բիզնես ինկուբատոր սկսնակ ընկերությունների համար: Ինկուբատորի հիմնական խնդիրն է նպաստել կայուն և մրցունակ ՓՄՁ-ների ստեղծմանն ու զարգացմանը՝ ձեռներեցներին տրամադրվող բիզնես աջակցության միջոցով շուկա դուրս բերելու համար:

ԵՄ կողմից ֆինանսավորվող ԻՐԻՍ ծրագրի շրջանակում ավելի քան երեք հարյուր ձեռներեց կմասնակցի դասընթացների, նրանցից հարյուր քառասունը ֆինանսավորման հնարավորություն կստանա: Ծրագրի շրջանակում ԻՐԻՍ բիզնես ինկուբատորի դրամաշնորհների ընդհանուր ֆոնդը կազմում է 712, 400 եվրո, փոխառությունների ֆոնդը՝ 474,600 եվրո:

Հայտադիմումների ընդունում

ԻՐԻՍ բիզնես ինկուբատորը ԻՐԻՍ ծրագրի շրջանակում հայտարարում է հայտադիմումների ընդունման երկրորդ փուլը SPARK, BUILD և START ծրագրերի համար, որոնք ուղղված են ԻՐԻՍ ծրագրի և ԻՐԻՍ ԲԻ-ի թիրախային խմբերի, մասնավորապես՝ սիրիահայերի և տեղացիների բիզնես նախաձեռնությունների աջակցությանը Հայաստանի Հանրապետության տարածքում:

Ծրագրի 2-րդ փուլի մասնակիցների ընտրությունն իրականացվելու է Հայտադիմումների ընդունման սույն հայտարարության միջոցով: ԻՐԻՍ ԲԻ-ի հայտադիմումների ընդունման 2-րդ փուլի հայտարարությունը գործում է 2020 թ. նոյեմբերի 05-ից, հայտադիմումների ընդունման վերջնաժամկետը 2020 թ. դեկտեմբերի 05-ն է:

Հայտադիմումները հասանելի են առցանց Facebook սոցիալական ցանցի ԻՐԻՍ ԲԻ-ի էջում՝ https://www.facebook.com/IRISBusinessIncubator և ԻՐԻՍ Բի պաշտոնական կայք-էջում www.irisbi.am, ինչպես նաև ԻՐԻՍ ԲԻ-ի հիմնադիր կառույցների կայք էջերում՝ www.caritas.am և www.sme.am: BUILD և START ծրագրերի հայտադիմումները լրացնելու համար, անհրաժեշտ է ունենալ Gmail հաշիվ:

Հայտադիմումներն ընդունվում են հայերեն (արևելահայերեն և արևմտահայերեն) լեզվով: ԻՐԻՍ ԲԻ-ը հրապարակել է միաժամանակ ընթացող երեք ծրագրի հայտադիմում՝ SPARK, BUILD, START:

- SPARK ծրագրի հայտադիմումը նախատեսված է ինքնազբաղված անձանց թիրախային խմբի համար,
- BUILD ծրագրի հայտադիմումը նախատեսված է ՓՄՁ ոլորտի ստարտափ թիրախային խմբի համար,
- START ծրագրի հայտադիմումը նախատեսված է ՓՄՁ թիրախային խմբի համար:

Թիրախային խմբերի սահմանումներ

ԻՐԻՍ ԲԻ-ի ծրագրերը նախատեսված են հետևյալ թիրախային խմբերի համար.

Ինքնազբաղվածներ. ինքնազբաղված են համարվում ՀՀ օրենքով սահմանված տնտեսական գործունեություն իրականացնող ռեզիդենտ ֆիզիկական անձինք կամ անհատ ձեռներեցները:

Ստարտափներ. ստարտափ են հանդիսանում դեռևս պետական գրանցում չունեցող բիզնես նախաձեռնությունները կամ անհատ ձեռներեցները, ինչպես նաև «Փոքր և միջին ձեռնարկության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված գերփոքր և փոքր ձեռնարկությունները, որոնց պետական գրանցման պահից չի անցել 3 տարի:

Փոքր եվ միջին ձեռնարկություններ (ՓՄՁ). ԻՐԻՍ ԲԻ ծրագրի շրջանակում ՓՄՁ թիրախային խմբի մեջ են մտնում այն փոքր և միջին ձեռնարկությունները, որոնք գրանցված

իրավաբանական անձ են կամ անհատ ձեռներեց, գործում են երեք տարուց ավելի և որոնց գործունեությունից ստացված տարեկան հասույթը չի գերազանցում 100 մլն ՀՀ դրամը (մոտ 190.000 եվրո):

ԻՐԻՍ Բի ծրագրերին կարող են դիմել 18 տարին լրացած անձինք՝ սիրիահայեր, տեղահանված այլ անձինք, հայրենադարձներ, լիբանանահայեր, ԵՄ և այլ երկրներից վերադարձած հայ միգրանտներ, ինչպես նաև տեղացիներ, ովքեր բնակվում և գործունեություն են ծավալում Հայաստանում:

Առաջնային ոլորտներ

ԻՐԻՍ բիզնես ինկուբատորն իր ծառայությունները նախատեսում է ավանդական ՓՄՁ ոլորտի համար՝ առաջնայնություն տալով հետևյալ ուղղություններին՝

- **Բիզնեսներ, որոնք նորարար են եւ սոցիալական ազդեցություն ունեն** (դրական փոփոխություններ են բերում մարդկանց մտածելակերպի, մշակույթի, կրթական մակարդակի, շրջակա միջավայրի պահպանության մեջ, աշխատելու հնարավորություն են ընձեռում հաշմանդամություն ունեցող անձանց, միգրանտներին, փախստականներին, հայրենադարձներին և խոցելի այլ խմբերի ներկայացուցիչներին, կամ իրենց բիզնեսից ստացված եկամտի մի մասը սոցիալական նպատակների իրականացման համար ներդնելու միտում ունեն):
- **Ոլորտներ, որտեղ սիրիահայերը առավել արդյունավետ կարող են ներդնել իրենց մասնագիտական հմտությունները** (ոսկերչություն, ռեստորանային բիզնես, սննդի և տեքստիլի արտադրություն, կոշկակարություն, ատաղձագործություն և այլն):
- **Բիզնեսներ, որոնք նպաստում են ՓՄՁ ոլորտի զարգացման՝ ՀՀ կառավարության ռազմավարության իրականացմանը** (գյուղատնտեսություն, արդյունաբերության և վերամշակում, տուրիզմ):

Բարձր տեխնոլոգիաների ոլորտի ստարտափները չեն հանդիսանում ԻՐԻՍ բիզնես ինկուբատորի առաջնային թիրախային խումբ, քանի որ երկրում արդեն իսկ գործում են մի շարք նախաձեռնություններ՝ ուղղված դրանց աջակցությանն ու ֆինանսավորմանը: Այնուամենայնիվ, եթե տեխնոլոգիական լուծումները միտված են՝ նպաստելու վերոնշյալ առաջնային ոլորտների բիզնես գաղափարների իրականացմանը, այդ ստարտափները ևս կդիտարկվեն:

Մասնակցության պայմաններ

Ընդունելության բոլոր փուլերում բոլոր դիմորդների և մասնակիցների համար կգործեն հետևյալ պայմանները.

ա. Նախքան հայտադիմումի հանձնումը յուրաքանչյուր դիմորդ ծանոթանում է սույն փաստաթղթին և առանց բացառության ընդունում փաստաթղթում ներկայացված բոլոր պայմանները:

բ. Հայտադիմումով ներկայացված բիզնես նախաձեռնությունը հստակ ձևակերպված է, պատկանում է դիմորդին և հանդիսանում նրա մտավոր սեփականությունը:

գ. Դիմորդը հաստատում է, որ որևէ երրորդ կողմ հայտադիմումով ներկայացված բիզնես նախաձեռնության հանդեպ չունի մտավոր սեփականության կամ այլ իրավունք, որը կարող է խոչընդոտ հանդիսանալ դրա իրականացմանը. հակառակ դեպքում թեկնածուն դուրս կմնա ծրագրից:

դ. Դիմորդը պատրաստ է պայմանագիր կնքել՝ համաձայնելով, որ ԻՐԻՍ բիզնես ինկուբատորի թիմը հետևի և վերահսկի դիմորդի բիզնես նախաձեռնության զարգացման ընթացքը բոլոր փուլերում:

ե. Ֆինանսավորման փուլ մտած ինքնազբաղված անձինք և ստարտափ թիմերը պարտավորվում են գրանցել իրենց բիզնես նախաձեռնությունը Հայաստանի Հանրապետության տարածքում՝ որպես անհատ ձեռներեց կամ շահույթ հետապնդող այլ կազմակերպաիրավական ձևով:

զ. Ծրագրում ընդգրկված մասնակիցը պարտավորվում է մասնակցել ծրագրային բոլոր պարտադիր բաղադրիչներին, այլապես դուրս կմնա ծրագրից:

է. Ցանկացած պահի դիմորդը և/կամ ծրագրի մասնակիցը կարող է որակազրկվել և դուրս մնալ ծրագրից, եթե որևէ կերպ մեղավոր ճանաչվի մասնագիտական խարդախության, կոռուպցիայի, հանցավոր կապերի, փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման, անչափահասների վարձու աշխատանքի կամ մարդկային թրաֆիկինգի այլ ձևերի մեջ:

Դիմորդի կողմից հետևյալ հմտություններին տիրապետելը պարտադիր է՝

- **Արևմտահայերենի կամ արևելահայերենի իմացություն,**
- **Համակարգչից օգտվելու հմտություններ, ինչպես նաև Microsoft Word, Excel, Power Point ծրագրերի իմացություն,**
- **էլեկտրոնային փոստով հաղորդակցվելու հմտություն:**

<u>Ընտրության փուլերը եվ ընտրության չափանիշները</u>

1. Հայտադիմումների ստուգում եւ նախնական ընտրություն

2020 թ.-ի դեկտեմբերի 05-ին հայտադիմումների ընդունման վերջնաժամկետի ավարտից հետո ԻՐԻՍ բիզնես ինկուբատորի թիմը կիրականացնի հայտադիմումների նախնական

ուսումնասիրություն և ընտրություն: Նախնական փուլի համար կընտրվի մինչև 160 դիմորդ՝ ոչ ուշ, քան դիմումների ընդունման վերջնաժամկետի ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում: Նախնական փուլ անցած բոլոր դիմորդները կստանան հաջորդ փուլ անցնելու մասին հավաստող էլեկտրոնային ծանուցում, որը կներառի բիզնես մոդելավորման միջոցառմանը մասնակցելու իրավեր: Այն դիմորդները, որոնք չեն անցնի հաջորդ փուլ, կստանան այդ մասին էլ. ծանուցում ԻՐԻՍ բիզնես ինկուբատորի կողմից՝ դիմումների ընդունման վերջնաժամկետից հետո ոչ ուշ, քան 4 շաբաթվա ընթացքում:

Ընտրության չափորոշիչներ. Հայտադիմումների ընտրությունը կիրականացվի ԻՐԻՍ բիզնես ինկուբատորի թիմի 3 անդամից բաղկացած գնահատողների խմբի կողմից հետևյալ հիմունքներով՝

ա. Դիմումների մեջ արտացոլված բիզնես գաղափարները պետք է լինեն բիզնես ուղղվածությամբ, այլ ոչ ծրագրային: Հաջորդ փուլ կանցնեն այն բիզնես նախաձեռնությունները, որոնք բիզնեսի ստեղծման հստակ նպատակ ունեն, այլ ոչ ժամանակավոր ծրագրեր են:

բ. Պատասխանատվություն. մրցունակ կհամարվեն այն ձեռներեցները, որոնք հանդես կգան հստակ բիզնես գաղափարներով և առավել պատրաստակամ կլինեն դրանք հաջողությամբ իրագործելու:

Նախնական ընտրությունը կիրականացվի՝ հիմք ընդունելով հետևյալ բաղադրիչների գնահատումը՝

- բիզնես նախաձեռնության զարգացման աստիճանը.
- շուկայի ներուժը.
- թիմը և իրագործելու կարողությունները.
- մոտիվացիան.
- բիզնես մոդելի վերաբերյալ հստակ պատկերացումը.
- հայտադիմումի ամբողջականությունը:

Եթե դիմորդների բիզնես գաղափարները գնահատման փուլում հավասար միավորներ ունենան, առավելությունը կտրվի սիրիրահայերին և/կամ այն բիզնես նախաձեռնություններին, որոնք ԻՐԻՍ բիզնես ինկուբատորի կողմից առաջնային համարվող ոլորտներում են գործելու:

2. Բիզնես մոդելի կազմում և փիչինգ

Նախնական փուլը հաղթահարած դիմորդները կհրավիրվեն՝ ներկայացնելու իրենց բիզնես մոդելները ժյուրիին, որն իրավասու է վերջնական «այո/ոչ» որոշում կայացնելու:

Բիզնես մոդելների ներկայացման օրվա միջոցառումը՝ փիչինգը, կկազմակերպվի հայտերի ընդունման վերջնաժամկետից ոչ ուշ, քան 30 աշխատանքային օրվա ընթացքում: Այս

ընթացքում նախնական ընտրությունն անցած բոլոր դիմորդները կհրավիրվեն Բիզնես մոդելավորման դասընթացին, որին կհաջորդի «Ինչպե՞ս ներկայացնել Ձեր բիզնես մոդելը» դասընթաց-աշխատարանը:

Գաղափարների ներկայացման ձևաչափը 3 + 7 է (3 րոպե ներկայանալու համար, 7 րոպե՝ ժյուրիի կողմից տրված հարցերին պատասխանելու համար): Արդյունքների մասին մասնակիցները կտեղեկացվեն ոչ ուշ, քան բիզնես մոդելների ներկայացման միջոցառումների ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Ժյուրիի կազմը եւ պարտականությունները.

Ժյուրին բաղկացած կլինի հետևյալ 7 անդամից՝

- ԻՐԻՍ ԲԻ-ի աշխատակազմից մեկ ներկայացուցիչ
- Մեկ հաջողակ սիրիահայ ձեռներեց
- Երկու անկախ փորձագետ (ձեռներեցության, բիզնեսի աջակցության կամ բանկային/ֆինանսական ոլորտի ներկայացուցիչներ)
- «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի մեկ ներկայացուցիչ
- «ՓՄՁ համագործակցության ասոցացիա» ՀԿ-ի մեկ ներկայացուցիչ
- Ավստրիական Կարմիր խաչի մեկ ներկայացուցիչ:

Ժյուրիի յուրաքանչյուր անդամ կգնահատի 1-ից 5 բալային համակարգով: Ժյուրիի անդամները որոշում են կայացնելու դիմորդի՝ ծրագրին մասնակցելու պատրաստվածության և ծրագիր մուտք գործելու համապատասխան փուլի վերաբերյալ՝ գնահատման համակարգի հիման վրա տրամադրելով հիմնավորված մեկնաբանություններ:

Ընտրված դիմորդները կհրավիրվեն մասնակցելու հետևյալ ծրագրերից մեկին.

- **"SPARK" ծրագիր**՝ զարգացման վաղ փուլում գտնվող թիմերի համար, որոնք հնարավորություն կունենան օգտվելու նախաինկուբացիոն ծառայություններից՝ նախատեսված գաղափարը, տեխնոլոգիան և բիզնես մոդելը վավերացնելու համար:
- **"BUILD" ծրագիր**՝ այն թիմերի համար, որոնք ունեն վավերացված բիզնես գաղափար և բիզնես մոդել, և կստանան աջակցություն՝ հավաստի բիզնես և ֆինանսական նախագիծ կազմելու համար:
- **"START" ծրագիր**՝ համոզիչ բիզնես և ֆինանսական նախագիծ ունեցող թիմերի և ձեռներեցների համար, որոնք հնարավորություն կստանան օգտվելու ինկուբացիոն և ֆինանսավորման ծառայություններից:

ԻՐԻՍ ԲԻ-ը հայտադիմումների ընդունման յուրաքանչյուր փուլում կարող է ընդունել մինչև 50 մասնակից՝ 20 SPARK, 20 BUILD և 10 START մոտավոր հարաբերակցությամբ:

3. Ինկուբացիոն փուլ

ԻՐԻՍ ԲԻ-ի ծրագրերից յուրաքանչյուրի համար ընտրված մասնակիցները դառնում են ԻՐԻՍ ԲԻ-ի ռեզիդենտներ և մուտք են գործում ԻՐԻՍ ԲԻ-ի ակադեմիա (տևողությունը՝ առնվազն 3 ամիս, կախված բիզնես նախաձեռնության զարգացման փուլից): ԻՐԻՍ ԲԻ ակադեմիայի ավարտին մասնակիցները հնարավորություն կունենան ներկայացնելու իրենց բիզնես պլանները ժյուրիին (տե՛ս կազմը վերևում): Այն մասնակիցները, որոնց բիզնես պլանները կհաստատվեն ժյուրիի կողմից, կստանան ֆինանսավորում և հնարավորություն կունենան՝ մասնակցելու ԻՐԻՍ ԲԻ-ի քոուչինգի և մենթորինգի ծրագրերին՝ 6 ամիս տևողությամբ:

Այն մասնակիցները, որոնց բիզնես պլանները չեն հաստատվի, դուրս կմնան ԻՐԻՍ ԲԻ ծրագրերի հետագա փուլերից:

4. Ֆինանսավորման փուլ

ԻՐԻՍ ծրագրի շրջանակում ֆինանսավորում կտրամադրվի ընտրված մասնակիցներին՝ հետևյալ նպատակներին հասնելու համար.

- նպաստել սիրիահայերի և տեղացիների տնտեսական ինտեգրմանը.
- նպաստել ստարտափների հիմնադրմանը և կայացմանը.
- նպաստել ինքնազբաղված անձանց կայուն եկամտի ապահովմանը և բիզնես նախաձեռնությունների զարգացմանը.
- աջակցել ՓՄՁ-ների զարգացմանը.
- ներդրում ունենալ ՀՀ բիզնես միջավայրի զարգացման գործում՝ նորարար մոտեցումների միջոցով աջակցելով ձեռներեցների տարբեր խմբերին:

- SPARK ծրագրի ընտրված մասնակիցները կստանան մինչև 1.8 մլն ՀՀ դրամի չափով դրամաշնորհ:
- BUILD ծրագրի ընտրված մասնակիցները կստանան դրամաշնորհի և փոխառության համադրություն մինչև 7 մլն ՀՀ դրամի չափով:
- START ծրագրի ընտրված մասնակիցները կստանան մինչև 7 մլն ՀՀ դրամի չափով փոխառություն:

Յուրաքանչյուր մասնակցի համար դրամաշնորհի և փոխառության չափը կախված կլինի ներկայացված բիզնես պլանից և դրանում արտացոլված ֆինանսական կարիքներից: BUILD և START ծրագրերի շրջանակում համապատասխանաբար՝ յուրաքանչյուր փոխառության համար կկիրառվի հետվճարման անհատական մոտեցում՝ առավելագույնը 24 ամիս մարման ժամկետով:

ֆինանսավորում ստանալու նպատակով յուրաքանչյուր մասնակցի հետ կնքվելու է ֆինանսավորման պայմանագիր: Փոխառությանը դիմելու համար մասնակիցները պետք է ներկայացնեն ռիսկերի ապահովման հետևյալ մեխանիզմներից որևէ մեկը՝

- Առնվազն 2 երաշխավոր.
- և/կամ գրավ:

5. **Աճի եւ զարգացման փուլ**

ֆինանսավորում ստանալուց հետո ԲԻ-ի ռեզիդենտները ևս 6 ամիս հնարավորություն կունենան օգտվելու քոուչինգի և մենթորության ծրագրերից՝ կախված բիզնեսի զարգացման փուլից: Նրանք նաև հնարավորություն կունենան՝ օգտվելու ԻՐԻՍ ԲԻ-ի համաշխատանքային (CoWork) տարածքից և գործընկերային լայն ցանցից:

<u>Հետադարձ կապ</u>

ԻՐԻՍ բիզնես ինկուբատոր
12/2 Ամիրյան փողոց, 0010, Երևան, Հայաստան
Հեռ.՝ 011 474724; 044 474724
Էլ. հասցե՝ info@irisbi.am

«ԵՄ ԻՐԻՍ բիզնես ինկուբատորն ստեղծվել է 2019 թ-ին «Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ-ի և «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի կողմից՝ «Սիրիահայերի և տեղացիների դիմակայունության բարձրացում» (ԻՐԻՍ) ծրագրի շրջանակում: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից՝ Սիրիական ճգնաժամին ի պատասխան ստեղծված ԵՄ տարածաշրջանային Թրաստ ֆոնդի՝ ԵՄ Մադադ ֆոնդի միջոցով, Ավստրիական զարգացման համագործակցության և Ավստրիական Կարմիր խաչի կողմից և իրականացվում է Ավստրիական Կարմիր խաչի ղեկավարած կոնսորցիումի կողմից, որի անդամներն են «Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ-ն, Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ն և «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ն»: